

չէն տապանաբար մը, որ հաւանաբար գերեզմանն է Սաչակիր ասպետի մը:

Երկրորդ հետազոտութիւնը կ'ընեն անգղիացի երկու հնախօս երկրաչափներ՝ Գոնտէր և Քիչնէր. 1874 Յունուար 24ին կը քննեն աւերակները, կը պատրաստեն անոնց յատակագիծը, ըստ Պաղեստինի Հնագիտական ընկերութեան, և իրենց քննութեան արդիւնքը կը տեղեկագրին հետեւեալ կերպով. «Այս գիւղի աւերեալ եկեղեցին պահպանուելու լաւագոյն վիճակ մը ունեցած է. երկու թևերու սիւները և արևմտեան պատը փլած են: Այն կը վերաբերէր Ս. Գերեզմանին և աւարտած էր 1146ին:

Նոյն եկեղեցւոյն քովը կար հիւանդանոց մը: Պատերը խիստ հաստ են, հիւսիսային եւ հարաւային պատերուն հաստութիւնը 9 ոտք է, արևմտեան պատին երկարութիւնը զրոէն 72 ոտք, հիւսիսայինը՝ 110 ոտք, եկեղեցւոյն ատեանը 14 ոտք արամագիծ ունի, եւ կողմնակի մասերը՝ 7 ոտք: Նեցուկները՝ որ կապուած են սիւներուն հետ, ներսի կողմէն կը մնան պատերուն վրայ: Եկեղեցին երկու կողմին վրայ ունի չորս չորս պատուհան. հարաւային կողմը կայ կողմնակի դուռ մը, արևմտեան կողմէն, երկրորդ պատուհանին քով: Ներսի որմաքարերը գեղեցկօրէն յարդարուած են չափաւոր մեծութեամբ. քարերուն վրայ կը տեսնուին որմնագիրներու տեսակ մը նշաններ, որ յաճախակի կրկնուած են քարերուն վրայ: Արտաքին որմնադրութիւնը շատ կոշտօրէն յարդարուած է, քարերը ողորկ չեն, անոնց կցուածքները խիճերով բռնուած են, իսկ պատերուն ներսի կողմի քարերը տաշուած են: Պատուհանները կամարածե են, սիւներուն խոյակները զանազան ձևեր ունին: Արևելեան պատերն ամբողջ են. կողմնակի մասերը կը մնան: Եկեղեցին՝ համաձայն իր շինութեան ժամանակին, կը թուի թէ իր նաւին (nef) վրայ ունէր դստիկոն մը. կամարներուն աղեղները սրածայր եղած են. արևելեան պատուհանները՝ կողմնակի պատերուն նման կամարածե են: Սիւներուն խոյակներուն վրայ, պատուհաններուն տակէն, պատերուն շուրջը շինուած է քիւ մը» (The Survey of western Palestine, էջ 88-89):